ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունվարի 2018 թվականի N03 -Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 6-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 18-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N:737-Ն որոշման N 1 հավելվածի 81-րդ կետի, N 2 հավելվածի 12-րդ, 13-րդ, 16-րդ, 18-րդ և 20-րդ կետերի դրույթները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 1020-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2018 թվականի հաստիքացուցակը 164 հաստիքային միավորի համար՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2017 թվականի հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Ա որոշումը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Խաչատուր Պողոսյանի վրա:

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է